ԿԱՄՈ Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և
ջրաօդերևութաբանության ամբիոն

ԳՐՈՂ ՐԱՖՖԻՆ՝ ԱՇԽԱՐՀԱԳԵՏ, ՀԱՅՐԵՆԱԳԵՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Բանալի բառեր - աշխարհագրական-հայրենագիտական նյութ, ուղեգրություն, տեղանուն, բնապատկեր, աշխարհագրական տեղավայրերի գեղարվեստական ընկալում:

Խնդրի դրվածքը – Ռաֆֆին առավելապես հայտնի է որպես տաղանդավոր գրող, բայց քիչ ուսումնասիրված է որպես աշխարհագետ, հայրենագետ և ճանապարհորդ: Ուստի խնդիր է դրված նրան ներկայացնել այս տեսանկյունից, քանզի հայ գրողներից քչերը կարող են համեմատվել Ռաֆֆու հետ՝ աշխարհագրական տեղեկատվության հավաստիության և անաչառության մատուցման առումով:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ռաֆֆին թողել է գրական մեծ ժառանգություն՝ հատկապես պատմավեպեր և ուղեգրություններ: Դրանք աչքի են ընկնում աշխարհագրական-հայրենագիտական մեծաթիվ տեղեկություններով:

Փորձենք դրանց հիման վրա Ռաֆֆուն ներկայացնել թե՛ որպես ճանապարհորդ, թե՛ աշխարհագետ, և թե՛ հայրենագետ:

Ռաֆֆուն որպես ճանապարհորդ ներկայացնելիս պետք է հենվել նրա ուղեգրությունների վրա, որոնցից մեզ են հասել երեքը՝ «Ճանապարհորդություն Պարսկաստանի», «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» և «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում» [2]:

Առաջին ճանապարհորդության ժամանակ Ռաֆֆու երթուղին անցել է բազմաթիվ բնակավայրերով. Էջմիածին-Շահթախտ-Մակու-Խոյ-Դուզլաղ-Սալմաստ-Փայաջուկ-Փոքր Հաղբակ-Հաղբակ-Մար Գավառ-Ուշնի-Ուրմիա-Սինա-Սակղ-Սուլդուզ-Սովուխ Բուլախ-Բինաբ-Միանդաբ-Մարաղա-Դոխարզան-Գուլեյստան-Թավրիզ:

Երկրորդ ճանապարհորդության սկիզբը 1877 թվականի սեպտեմբերն էր, երբ Ռաֆֆին, մեծապես հետաքրքրվելով «կյանքի ուսումնասիրության» խնդիրներով, ձեռնարկում է իր նոր երթուղին. Թիֆլիս-Աղտաֆա-Դիլիջան-Քարվանսարա-Սիմյոնովկա-Սևանա լիճ – Չիբուխլու – Ելե-

նովկա – Ախտա - Նոր Բայազետ-Երևան-Վաղարշապատ-Նորագավիթ-Ազ-Համզալի-Յուվա-Դավալու-Սադարակ-Բաշ Նորաշեն-Նախիջևան-Ագուլիս ուղղությամբ:

Ռաֆֆու երրորդ ուղևորությունը կատարվել է 1881թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին՝ ընդգրկելով Թիֆլիս-Սալահլու-Շամքոր-Կարաեր-Գանձակ-Ելենդորֆ-Հաջիշեն-Ազատ-Գետաշեն-Կարաբու-լաղ-Թոդան-Էրքեջ-Կարաչինար-Խարխափուտ-Գյուլիստան-Թոռուտ-Հոռեկ-Թալիշ-Մատաղիս-Դաստակիր-Տոնաշեն-Չարդախլու-Մեծ Շեն-Մոխրաթաղ-Նոր-Մոխրաթաղ-Կուսապատ-Մարտակերտ-Գյուլյաթաղ-Ջանյաթաղ-Մեհմանա երթուղին:

1881 թ. հուլիսի 20-ին Ռաֆֆին ընդհատում է «Մշակում» «Դավիթ Բեկը» հատված առ հատված տպագրելը և որոշում է Դավիթ Բեկի հետքերով մեկնել Արցախ ու Սյունիք՝ վեպի գրության համար անհրաժեշտ պատմական սկզբնաղբյուրները որոնելու: Արդյունքում հավաքվում են ոչ միայն վեպի համար անհրաժեշտ նյութերը, այլև դրանք հիմք են դառնում «Խամսայի մելիքությունները» գրելու համար: Այս ճանապարհորդությունը մեծ տպավորություն է թողնում Ռաֆֆու վրա: Ինչպես գրում է Ս. Սարինյանը. «18-րդ դարի Սյունյաց աշխարհը հիրավի հայտնություն եղավ Ռաֆֆու համար: Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական շարժումը, Արցախի մելիքությունները միանգամայն նոր դրվագներ էին գրանցում հայոց պատմության էջերում, հուշում ազգային ոգու կենսունակության չսպառված հնարավորությունները» [4]:

Ռաֆֆին ինքը ուղեգրության մեջ գրում է, թե ինչպես է հավաքել անհրաժեշտ պատմական նյութերը ձեռագրերի հիշատակարաններից, վիմական արձանագրություններից, ինչպես նաև գրառել Արցախում և Սյունիքում այդ շրջանին վերաբերող և ժողովրդի հիշողության մեջ դեռևս կենդանի պատմություններն ու ավանդությունները: Իր ուղևորության ընթացքում թե ինչպես է Ռաֆֆին մանրակրկիտ հավաքել պատմական բնույթի հնարավոր բոլոր նյութերը, երևում է Ա. Ծատուրյանի հուշերից: Վերջինս ուսուցիչ է եղել Սյունիքի Եղվարդ գյուղում և Ռաֆֆուն ուղեկցել է մի շարք բերդեր և վանքեր գնալուց: Ծատուրյանը գրում է, որ իր տատը գրողին պատմել է «Դավիթ Բեկի ժամանակներին վերաբերող հին զրույցներն ու ավանդությունները», որոնք Ռաֆֆին գրի է առել իր ծոցատետրում [3, էջ 271]:

Ռաֆֆին «Սամվելի» առաջաբանում նշում է, որ պատմությունը կենդանություն է հաղորդում ժողովրդի կյանքին և ցավով նկատում էր, որ մեր պատմության մեջ բացակայում է ժողովուրդը: Մոտավորապես նույն

միտքը նա հայտնել է Ծատուրյանին. «Բավական չեն մեր վանքերում պահպանված ձեռագիր վավերագրերը: Դրանք չոր ու ցամաք տարեգրություններ են: Պատմագրություն ստեղծելու համար հարկավոր է նաև կենդանի նյութ, որը կուտակված է ժողովրդի կենցաղի մեջ» [4, 278]:

Գրողը նաև անհոգնաբեկ որոնում է պատմական հիշատակներ: Ինչպես վկայում է հուշագիրը. «Ռաֆֆին անհամբեր որոնում էր մի գիր՝ քարե մի լեզու խոսեցնելու, սակայն գորշ ու անդրդվելի քարակույտերը համառում էին» [4, 27]:

Ընդհանրացնելով երեք ճանապարհորդությունների արդյունքները՝ հանգել ենք մի շարք եզրակացությունների.

ա) Ռաֆֆին տարբեր միջոցներով (ոտքով, ձիով, կառքով) հաղթահարել է մոտ 3000կմ-ից ավել ճանապարհ և դրանով իսկ իրավացիորեն իրավունք ունի տեղ գտնելու այն բոլոր ճանապարհորդների շարքում, ովքեր իրենց հավաքած հարուստ տվյալներով, երկրից երկիր կատարած ուղևորություններով մեծ ներդրում են ունեցել աշխարհագրության պատմության հարստացման գործում:

բ) Ռաֆֆու ուղեգրությունների միջոցով հնարավոր է դառնում նրա անցած տարածքների բնության, բնակչության և տնտեսության առանձնահատկությունների բացահայտումը՝ հնարավորություն տալով մեզ հարյուր հիսուն տարվա կտրվածքով դիտարկելու դրանց փոփոխություններն ու վերջիններիս պատճառները:

գ) Ճամփորդական նոթերում Ռաֆֆին ներկայացրել է իր անցած տարածքների բնական պայմանները, գյուղատնտեսության ճյուղերի՝ անասնապահության և բուսաբուծության վիճակը, բնակչության բաշխվածության և բնակավայրերի տեղաբաշխման տիպերը, բնակվող ժողովուրդների, ազգերի, ցեղերի թվաքանակը, նրանց կենցաղի ու սովորույթների, դավանանքի և ավանդույթների առանձնահատկություն-յունները, տեղաբնակների առևտրական և արհեստային գործունեության ոլորտները, բազմաթիվ տեղանունների և աշխարհագրական տեղավայրերի անվանումների ստուգաբանությունը, ռելիեֆի յուրահատկությունները, բերդերի, ամրոցների, վանքերի ու եկեղեցիների նկարագրությունը:

Ռաֆֆին որպես հայրենագետ, դիտարկելով բնությունն իբրև աշխարհագետի դիտարան և հասկանալով աշխարհագրության ոգին, որպես տարածության մեջ տարասեռ երևույթների զուգորդում և փոխներգործություն, յուրովի է ընկալում բնության երևույթները, լանդշաֆտների ու բնապատկերների էությունն ու փոփոխությունները: Իր ճամփորդություններով Ռաֆֆին նպաստել է հայրենագիտական երթուղիների ընտր-

ման ու կազմակերպման գործին: Նա հայրենագետի ու գրող-գեղագետի անուրանալի ձիրքով է ներկայացնում իր բզկտված հայրենիքի տարեգրությունը, նրա ամեն մի հատվածի ռելիեֆը, լանդշաֆտները՝ կատարելով աշխարհագրական օբյեկտների համեմատական գնահատում և վերլուծություն:

Տեղին է նկատել գրականագետ Ս. Սարինյանը. «Ռաֆֆու ստեղծագործությունը ժողովրդի պատմության մի ամբողջ հանրագիտարան է՝ կենցաղի, բարքերի, սոցիալական և քաղաքական ձգտումների, բնաշխարհի և տեղագրության հարուստ նկարագրություններով» [1, էջ 36]: Որպես հայրենագետի՝ Ռաֆֆու ստեղծագործությունները տոգորված են հայրենասիրական շնչով, հայրենի բնության հանդեպ ունեցած մեծագույն սիրով, հայրենի եզերքը ընկալելու և ճանաչելու ձգտմամբ ու ցանկությամբ:

Ռաֆֆու շոշափած աշխարհագրական հարցերի շրջանակը լայն է թե՛ տարածաժամանակային և թե՛ ընդգրկման առումով: Դա ակնառու երևում է մեր կողմից կազմված սխեմատիկ պատկերում (տես նկար N1):



Պատմաաշխարհագրական հարուստ տվյալների և տեղեկությունների մատուցում՝ անհրաժեշտ մեկնաբանություններով հագեցած	Հայաստանի աշխարհագրական նկարագրի մատուցումը տարածաժամանակային կտրվածքով (4-19 դարեր)	Աշխարհագրական պատկերներ և պատառիկներ՝ արտահայտված բանաստեղծություններում
Տեղանունների և աշխարհագրական անվանումների ստուգաբանություն	Աշխարհագրական համեմատություններ կատարելու հմտությունը, աշխարհագրական դիպուկ նկարագրություններ	Ժողովրդի կենցաղի, բարքերի, սովորույթների մատնանշում, գործունեության ոլորտի հիշատակում
Խոշոր բնական օբյեկտների, բնակչության տեղաշարժերի, առևտրական փոխհարաբերությունների հիշատակում	Ուղեգրությունների դերը աշխարհագրական նյութի հավաքման, մշակման և մատուցման գործում (ճամփորդություններ ոտքով, ձիով և կառքով)	Բնակավայրերի և բնակչության մասին տարատեսակ տեղեկությունների հաղորդում (դիրք, թվաքանակ, զբաղմունք)
Սոցիալ-տնտեսական հարաբերությունների վիճակը	Տվյալների հաղորդում արհեստների մասին (ոսկերչություն, ջուլհակություն, գինեգործություն)	Բնակլիմայական պայմանների և բուսակենդանական աշխարհի նկարագրում



Նկ. 1 Ռաֆֆու շոշափած աշխարհագրական-հայրենագիտական հարցերի շրջանակը

Ամփոփում: Աշխարհագրությունը թե՛ գիտություն և թե՛ արվեստ դիտարկող, աշխարհագրության և գրականության առնչությունների հարցերով զբաղված մի շարք հեղինակներ [3, 4] գալիս են հաստատելու մեր այն տեսակետը, որ գրող Ռաֆֆու ստեղծագործությունների աշխարհագրական նյութը բազմաշերտ և բազմակողմանի տեղեկատվության աղբյուր է:

Ռաֆֆու գեղարվեստական գրականությունը, որպես ռեգիոնալ աշխարհագրության յուրատեսակ աղբյուր՝ արտացոլում է աշխարհագրության և գրականության առաջին հայացքից չերևացող կապերը՝ հատկապես մարդ-բնություն փոխհարաբերությունների դաշտում:

Ռաֆֆու մատուցած աշխարհագրական տեղեկատվությունը կարող է սկզբնաղբյուրային արժեք ունենալ մեր տարածաշրջանի պատմաաշխարհագրական, էթնոաշխարհագրական, էթնոլեզվաբանական շատ հարցերի լուսաբանման, կնճռոտ խնդիրների պարզաբանման ու մեկնաբանման առումով, ինչն այսօր խիստ արդիական է:

К. Б. АЛЕКСАНЯН - ПИСАТЕЛЬ РАФФИ ГЕОГРАФ, ПУТЕШЕСТВЕННИК И КРАЕВЕД - Цель статьи показать вклад великого армянского писателя Раффи в области географии. Он своими путешествиями и набранным очень объемным и качественным географическим материалом в праве стать в ряду географов-краеведов и путешественников.

K. B. ALEKSANYAN - THE NOVELIST RAFFI AS AN GEOGRAPHER, LOCAL HISTORIAN AND TRAVELLER. - The purpose of the article is to show the contribution of the great Armenian novelist Raffi in the fieald of geography. With his travels and collected vluminous and high quality geographic materials he has the right to stand in the ranks of geographers, local historians and travellers.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարինյան Ս. Ռաֆֆու ստեղծագործությունը/ տես Ռաֆֆի ԵԼԺ, հ. 1, էջ 9-36/ Ե., 1983թ.

2. Ռաֆֆի ԵԼԺ, հ. 9, Ե. 1987թ.:

3. Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, աշխտ. Խ. Սամվելյանի, Երևան, 1986:

4. Սարինյան Ս., Ռաֆֆի, Երևան, 2010:

5. Աշխարհագրության արվեստն ու գիտությունը / խմբ. Ջորջ Դեմկոյի և Վ. Աննենկովի/Ե. 2007, 90 էջ:

6. Արաքս Կ., Աշխարհագրությունը և գրականությունը, Ե. 2008, 144 էջ:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-14